Արձանագրություն 3

ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/27 ծածկագրով գնանշման հարցման
Բժշկական պարագաների և բժշկական նշանակության ապրանքների գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 13.10.2020թ. ժամը 10:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Ս.Խաչատրյան – «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի բուժ.գծով փոխտնօրեն

Անդամներ

Ա.Զոհրաբյան- «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի դեղագետ

Հ.Գաբրիելյան - «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հաշվապահ, գանձապահ

Ա.Մանուկյան - «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի գործավար

Ա.Հակոբյան - «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի վարորդ, մեխանիկ

Քարտուղար-գնումների համակարգող

Լ.Բազիկյան - «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հաշվապահ, գնումների համակարգող

1. **ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/27 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում կազմակերպված բանակցությունների վերաբերյալ**

1.1 ՀՀ Կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի՝ ծանուցում է ներկայացվել հրավերով պահանջված փաստաթղթերի առկայությունը բավարարած մասնակիցներին՝ հրավիրելով գների նվազեցման շուրջ բանակցությունների 1-4-րդ չափաբաժինների մասով 2020թ. Հոկտեմբերի 13-ին ժամը 10:00-ին, կամ նվազեցված գնային առաջարկները ուղարկել lusine.bazikyan@bk.ru էլեկտրոնային փոստին՝ բնօրինակ տարբերակից սկանավորված ձևով կամ էլեկտրոնային ստորագրությամբ:

ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/27 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում կազմակերպված գների նվազեցման շուրջ բանակցություններին ոչ մի մասնակից չի ներկայացել և էլ. փոստով չեն ներկայացվել նոր գնային առաջարկներ:

Հանձնաժողովի քարտուղարը ներկայացված փաստաթղթերը, ինչպես նաև գնահատման թերթիկների երկուական օրինակները տրամադրել է ընթացակարգի գնահատող հանձնաժողովին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

2. **Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին**

Հիմք ընդունելով կից Հավելված 1-ով ներկայացվող գնային առաջարկները և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/27» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Չափաբաժնի համար	Մասնակցի զբաղեցրած տեղը	Հայտի գնահատականը
«Լեյկո» ՍՊԸ	1-ին, 2-րդ, 3-րդ	1-ին տեղ	բավարար
Աննա Բալայան Ա/Ձ	1-ին և 2-րդ	2-րդ տեղ	բավարար
«Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ	4-րդ	1-ին տեղ	բավարար
«Դեզսերվիս» ՍՊԸ	4-րդ	2-րդ տեղ	բավարար

-Առաջին տեղ զբաղեցրած Մասնակիցների կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3. <u>Հաստատել «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ -20/27» գնման ընթացակարգի ընտրված մասնակիցների մասին</u>

Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը, այն է. Ընտրված մասնակիցը ճանաչվել է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով՝ ստորև ներկայացվում է «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/27» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակիցների ցանկը՝ ըստ չափաբաժինների.

Ընտրված մասնակից	Չափաբաժնի համար
«Լեյկո» ՍՊԸ	1-ին, 2-րդ, 3-րդ
«Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ	4-րդ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

<u>4. «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ -20/27» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին</u>

4.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերի համաձայն հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը, Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակել գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, և անգործության ժամկետ սահմանել հայտարարությունը տեղեկագրում հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 5-րդ օրացուցային օրը ներառյալ:

4.2 Անգործության ժամկետի ավարտին հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել ընտրված մասնակիցներին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

<u>5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին</u>

ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/27 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ընտրված մասնակցի հետ գնման պայմանագիր կնքելու հաջորդ աշխատանքային օրը **ժամը 16:00-ին** Վեդու բժշկական կենտրոն ՓԲԸ-ի շենքում ՝ Արարատի մարզ ք.Վեդի Գայի 2:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Հանձնաժողովի նախագահ՝ Ս.Խաչատրյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա.Զոհրաբյան

Հ.Գաբրիելյան

Ա.Հակոբյան

Ա.Մանուկյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Լ.Բազիկյան